Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստան, Երևան ք., Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-79

Թիվ 23/գիտ. 10. 04. 2012 թ.

Փիլիսոփայության և տրամաբանության
ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանին

Հարգելի տիկին Հովհաննիսյանին,

2012թ. հոկտեմբերի 12-ին Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի կունենա երիտասարդ գիտնականների չորրորդ հանրապետական գիտաժողովը, որի ընթացքում կքննարկվեն հարցեր հետևյալ մասնագիտություններից.

պատմագիտություն,
լեզվաբանություն և գրականություն,
մանկավարժություն և մեթոդիկա,
հոգեբանություն և սոցիոլոգիա,
փիլիսոփայություն, քաղաքագիտություն
աշխարհագրություն և տնտեսագիտություն,
ֆիզիկա, մաթեմատիկա, ինֆորմատիկա,
քիմիա և կենսաբանություն,
արվեստ /կերպարվեստ և երաժշտություն/:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2012թ. սեպտեմբերի 12-ը էլեկտրոնային տարբերակով (էլեկտրոնային փոստի հասցեն՝ gitkentron@vspi.am) կազմկոմիտե ուղարկել հետևյալ նյութերը.

1. դիմում (հավելված 1-ում ներկայացված ձևով),
2. հոդվածը (հավելված 2-ում ներկայացված պահանջներով),
3. ասպիրանտների և հայցորդների հոդվածների վերաբերյալ գիտական ղեկավարի երաշխավորական նամակ-կարծիքը,
4. «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ի Վանաձորի մասնաճյուղի 160361078142 (ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36, ՀՎՀՀ 06902542) հաշվեհամարին մուծված 3000 դրամի բանկային կտրոնի պատճենը:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

Գիտական նստաշրջանին ներկայացված, կազմակերպչական հանձնախմբի կողմից հավանության արժանացած և ընթերցված աշխատանքները կտպագրվեն ՎՊՄԻ-ի «Գիտական հոդվածներ» ժողովածուի համապատասխան մասնագիտական պրակներում:

ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ-ՁԵՎԸ

1. ԱՀԱ,
2. էլեկտրոնային փոստի հասցեն,
3. կազմակերպությունը,
4. պաշտոնը, գիտական աստիճանը,
5. հոդվածի ամբողջական անվանումը,
6. մասնագիտությունը,
7. հասցեն,
8. հեռախոսը:

ՀՈԴՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԸ

1. Հոդվածը ներկայացվում է A 4 ձևաչափի թղթի վրա՝ միակողմանի տպված:
2. Տարածքը՝ բոլոր կողմերից՝ 2սմ:
3. Տառատեսակը՝ հայերենի համար Arial Armenian, անգլերենի և ռուսերենի համար՝ Times New Roman:
4. Միջտողային հեռավորությունը՝ 1,5:
5. Տառաչափը՝ տեքստում՝ 12, հղումներում՝ 9 :
6. Հղումները տրվում են էջի ներքևում՝ աճման կարգով:
7. Հղումները պետք է ներառեն հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը, աշխատանքի վերնագիրը (ժողովածուի դեպքում՝ ժողովածուի անվանումը, պարբերական հրատարակության դեպքում՝ պարբերականի անվանումը և հերթական համարը), հրատարակության տեղը, թիվը, էջը:
8. Հոդվածի առաջին էջը պետք է ներառի՝
   - հոդվածի վերնագիրը՝ մեջտեղում՝ թավ մեծատառերով,
   - հաջորդ տողում՝ աջ հավասարուով հեղինակ(ներ)ի անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը, հաջորդ տողում՝ կազմակերպության լրիվ անվանումը,
   - երկու տող հեռավորությունից հետո՝ հոդվածի 5-10 հանգուցային բառեր և արտահայտություններ,
   - երկու տող հեռավորությունից հետո՝ հոդվածի տեքստը:
9. Հոդվածի տեքստից հետո այբբենական կարգով տրվում է գրականության ցանկը՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ վերնագրով: Գրականության ցանկում աշխատության հրատարակության տեղից հետո պետք է նշվի հրատարակչությունը, հրատարակության թվից հետո՝ աշխատության ընդհանուր էջաքանակը:
10. Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

11. Գրաֆիկական նյութերը, նկարները պետք է լինեն պարզ, նրանց վրա զետեղված տեքստերի չափը՝ ոչ պակաս 9 pt, նկարների չափը՝ 110 x 170 մմ ոչ ավելի:
12. Հոդվածները պետք է ունենան երկու լեզուներով ամփոփումներ՝ նվազագույնը 100 բառ ծավալով: Եթե հոդվածը հայերենով է, ապա ամփոփումները տրվում են ռուսերենով և անգլերենով:
13. Հոդվածները կտպագրվեն միայն փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերը կարելի է կազմկոմիտեին ներկայացնել համակարգչային կրիչով կամ ուղարկել էլեկտրոնային փոստով (էլեկտրոնային փոստի հասցեն՝ gitkentron@vspi.am) մինչև 2012թ. հունիսի 30-ը:

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Հոդվածների հետ կապված բոլոր հարցերով կարող եք դիմել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտելիքի և գիտության կենտրոն (ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Արթուր Մելիքյան):

Հասցեն՝ Հայաստան, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36, հեռախոս (+322) 4-18-55 (լրացուցիչ 148), բջջային՝ 091 749-776, e-mail: gitkentron@vspi.am

Հարգանքով՝ *Կ. Վարդանյան*